

## ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԸՆԿԱՌՈՏԱՆՈՒՄ.

**ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴՈՒԿ**

**ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻՈ.ՐԲ ՀՕՐ**

**Եղիշէ ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ Շնորհիւն  
Ասուծոյ եւ կամօք ազգին արքեպիսկոպոս Կոստանդ  
նուպոլսոյ եւ պատրիարք հայոց Թաւրքիոյ**

Գերապատիւ Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, Թեմակալ  
Առաջնորդաց, Առաջնորդական Տեղապահաց և Պատրիարքական  
Փոխանորդաց, Վանահարց և Քարոզչաց. Բարեկրօն Աւագերի-  
ցանց, Քահանայից, Սարկաւագաց և Դպրաց, Պատուարժան Ան-  
դամոց Գաւառական Ընդհանուր, Կրօնական և Քաղաքական Ժո-  
ղովոց և Տեսուչ Խորհրդոց, Բարեջան Թաղականաց, Հոգաբար-  
ձութեանց, Խնամակալութեանց, Դաստիարակաց՝ Ուսուցչաց և  
Ուսուցչունեաց, Կրթական և Բարեգործական Ընկերութեանց և  
համօրէն հաւատացելոց ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, արանց  
և կանանց, ծերոց և տղայոց, Երիտասարդաց և կուսանաց ՈՂԶՈՅՆ  
ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ:

Շնորհք, Մէր, Խաղաղութիւն և Ողորմութիւն Հօր և Որդւոյ  
և Հոգւոյն Արրոյ բազմացի ի ձեզ ամենեսին, ի հարազատ որդիս  
Առաքելական Ուղղափառ Ս. Եկեղեցւոյն Հայաստանեաց հիմնելոյ  
և հաստատելոյ ի ձեռն Արրոյ Առաքելոցն Թագէոսի և Բարդու-  
ղիմէոսի և Արրոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, պայծառա-  
ցելոյ յաւուրս Արրոյ Թարգմանչացն մերոյ Սահակայ և Մեսրոպաց  
և ամրացելոյ արեամբ նահատակացն մերոց հոտ և նորոց՝ յայտից  
և անյայտից մինչև ցմեր ժամանակաւ:

Կ. Պոլսի Պատրիարքութեան պաշտօնին ու պարտականու-  
թեանց կոչուելէս անմիջապէս յեաոյ թէպէտե հարկ է՝ ըստ սո-  
վորութեան՝ գրով օրհնութեան և յորդորանաց կարևորն ու օգտա-  
կարը յիշեցնել պատրիարքարանիս իրաւասութեան ներքեւ գանուող  
մեր սիրելի հօտին, սակայն ինչ ինչ պատճառներով՝ որոնց  
նկատմամբ աւելորդ է խօսիլ՝ յապաղեցաւ այս: Տարուան մը  
պաշտօնավարութեանս փորձը՝ որ բաղձացուած արդիւնաւորու-  
թիւնը չունեցաւ՝ կրնար ինքնին ստգտանք մը ըլլալ ապիկարու-  
թեանս մասին, և հետևաբար լսելիայն հրաւէր մը իսպառ հեռա-  
նալու պատրիարքական աթոռէն, սակայն ստանձնած լուծիս ու  
կատարած ուխտիս հանդէպ պատասխանատու մնալու բարոյական  
կորուս դեռ չսպառած, ու միւս կողմէն պատուական ժողովուրդին

գոյզն համակրանքն ու նուազագոյն ակնկալութիւնն անզամ գուրգուրանքով արդիւնաւորելու հարկադրուած՝ կշարունակեմ ինձի յանձուած գործը՝ որ կարողութիւնէս վեր է: Եւ որովհետեւ ինչպէս Ազգային ու վարչական ժողովներու և Տեսուչ Խորհուրդներու, նոյնպէս և հանրութեան թանկագին աջակցութիւնը պատրիարքական ծանր հոգերու թեթեացում մը կրնայ առթել մեծ մասամբ, և մանաւանդ Պատրիարքարանի պատկառանքը բարերար ազդեցութեան մը փոխարկել՝ անոր վիճակը բարելաւելու հայեցալէտով, պարտք համարեցայ այս քանի մը խօսքն ուզգել, «աղաշելով զձեզ, եղբարք, անսալ բանիս միտիթարութեան» (Երք. Ժի., 22):

Ճշմարտութիւն մըն է, թէ մեր ժողովուրդը հինաւուրց պատմութեան էջերուն վրայ տեղ մը գրաւած, ու ասիական քաղաքակրթութեան մէջ կարեոր բաժին մը ունեցած է ու տակաւին կազրի այսօր, գոյութեան այդ իրաւունքը պահած է անշուշտ անհատում զոհարերութիւններով, որոնք իր ինքնութիւնը կ'կազմեն: Պատմութեան վկայութիւնը Հայ ժողովրդի մասին անհերքելի է: Երկար զարերու ընթացքին՝ մերթ յաջող և մերթ ձախող պատահարներու բազմափոփոխ շրջաններէ անցնելով հանդերձ՝ ազգային ամբողջութիւն մը կրցած է ան կազմել մեր մէջ Փրկչական թուականէն շատ առաջ: Բայց իր հին աւանդութեանց՝ իր հողին ու յիշատակներուն՝ իր լեզուին ու սովորոյթներուն աղնուօրէն կապուած այդ ժողովուրդը՝ երկու հզօր քաղաքականաւթեանց արիւնահեղ մրցումներէն ընդունուած՝ բրիստոնէութեան առաջին զարերուն՝ իր գոյութեան սովորնացող վտանգ մը պիտի կրէր ապահովապէս ու պիտի չկրնար իր ճակատագրին տէր կանգնիւ, եթէ Քրիստոնէութիւնը Հայաստաննեաց Եկեղեցւոյ նորոգ կազմակերպութեան հիմը վերստին չամրապնդէր մեր մէջ ողորմութեամբն Աստուծոյ: Անզօր ու անհատատ քաղաքական իշխանութենէ մը աւելի՝ որ ալ չէր կրնար Հայ ժողովուրդին խաղաղ ու բնական բարզաւածումը ապահովել, քաջատես և արի՝ հայրենասէր ու սուրբ անձնաւորութեանց շնորհիւ՝ Քրիստոնէուկան Եկեղեցին իրըն պարիսպ և ամբութիւն ծառայելով մեզի՝ քայլայումի ենթարկուած մեծ զանգուածի մը մասերը հոգեկան միութեամբ պահպանից իր անկախ հովանաւորութեան ներքի:

Փրկչական թուականի Դ. դարուն սկիզբներէն մինչև ցայսօր մեր Եկեղեցին կատարած այս փրկարար գերը դաւանութեան մը չափ անխախտ հաւատալիք մը եղած է ամէն Հայու համար, և այս խորունկ համոզումովն է որ մեր ժողովուրդը ջերմեռանդութեամբ սիրած և յարգած է իր մայրենի Եկեղեցին, ոչ միայն իրը տատուածային խորան և հաստատութիւն, այլ և իրը որբա-

վայր՝ զոր նուիրապործած է իր իսկ զոհերուն արիւնովը, իրը ապաւէն՝ որու ծոցին մէջ ապաստանած՝ պղտոր հրապոյրներու և բանաւոր պահանջումներու դէմ չէ զիջած տուրեասիկ վաճառքի մը պէս փոխանակել իր զոյութեան տարրերը, վերջապէս իրը աղրիւր մը յոյսի և միսիթարութեան, ուսկից երբէք չէ պակսած իր կենդանութեան ջուրն, ու զարմանը իր ցաւերուն։ Այս կ'սիրենք մեր մայրենի Եկեղեցին, ու մեր մայրը կ'կոչենք զայն, ոչ թէ հաստրակօրէն ընդունուած բացարութեան մը համաձայն, այլ մանաւանդ որ անժառանգուած իր զաւակներուն ծնելամէր գիրկն եղաւ ան, ու սնուց զանոնք իր առողջ վարդապետութիւններովն, ու անվճառ ներշնչումներովը չզագրեցաւ երբէք անոնց սորվեցնելէ իր աստուածային Հիմնագրին գերազոյն բարոյականը, անձնուէր ոգին, ներողամիտ քաղցրութիւնը, կատարելութեան սէրը, արդարութեան գիտակցութիւնը, անկաշկանդ մտածութիւնը, հուժկու անհատականութիւնը, չարչարանքի խստամբերութիւնն ու փառք յաղթանակին։ Պէտք է խոստովանիլ սակայն՝ որ քրիստոնէական առաքինութեանց այդ սերմերը դառն ժամանակներու և տիսուր զանցառութիւններու հետեանքներով՝ իրենց յաջորդական աճումն ու պաղաքերումը չեն արդիւնաւորած, ու կանուխէն միայն ձեռք բերուած բարիքներու շնորհիւ է որ մեր հոգեոր պաշարը չէ սպառած բնաւ մեր շտեմարաններու մէջէն։ Մեր Ա. Եկեղեցւոյն պաշտպոն թերուն տակ՝ որ մեր մտաւոր ու բարցյական զարգացման նպաստած է որոշ չափով, ի հնումն ծաղկեցան զպրոցներ և դպրեվանքեր, կանգնեցան մարդասիրական հաստատութիւններ, և ե. զարուն մէջ տեղի ունեցած կրօնական գերազանց զարթումի մը նախաձեռնութեամբն էր որ յաւերժական երաշխիքն ունեցանք մեր լեզուին և գրականութեան, մեր հաւատքին ու պատմութեան։ Ահա յայտնի պատճառներ՝ զարուց ի գարս երախտապարտ մնալու մեր Ազգ, Եկեղեցւոյն հանդէպ, որ նուիրական պարտք մը կ'զնէ մեր ամէնուս վրայ իր սէրը վառ պահելու մեր մէջ, բայց առաւելապէս առ այդ պատասխանատուութեան միծագոյն բաժինը կ'յատկացնէ իր Եկեղեցական պաշտօնիհաններուն։ Հոգեոր շնորհարաշխութեամբ՝ եպիսկոպոսութեան, երիցութեան, և սարկաւագութեան, նոյն իսկ զպրութեան աստիճաններուն բարձրացած պաշտօնեանները կ'պարտին հաւատարիմ մնալ իրենց կոչումին։ Իրենց բովանդակ գործունէութեան նպատակը պէտք է ըլլայ Հայաստանեայց Ա. Եկեղեցւոյն ճշմարիտ փառաւորումը և բարեկարգ ուղղութիւնը լաւ իմացուած կրօնական ըմբռնումներով։

Պահանջուած տարրական պարտականութիւններ անդամինքնին գրաւականն են անոր պատուոյն ու մեծութեանը, Եթէ վիճակ է՝ որ կ'յանձնուի եպիսկոպոսին կամ առաջնորդին, ներելլ

չէ որ իր հովուութեան պաշտօնը կատարէ նա «իրեւ տիրելով վիճակացն»։ եթէ ժողովաւրդ է՝ որ յանձնուած է քահանային, ներելի չէ որ նա իր վերակացութիւնն ի գործ դնէ «զօշաքաղութեամբ»։ եթէ սեղան է՝ որ յանձնուած է սարկաւագին, ներելի չէ որ սպասարկէ «ակամայ», ու ամենքս ալ հաւասար պարաւոր եմք «լինել օրինակ հօտին Աստուծոյ» (Ա. Պետր. Ե. 2—3), և «զգործուաւտարանչի գործելով» հանդարառութեամբ խրատելու, երկայնամառութեամբ միխթարելու մեր ընկերը։ Դպիրը անգամ որոնց պաշտօնն է «սաղմոսիւք և օրհնուութեամբ և երգովք հոգեորօք» նուագիլ Տիրոջ տաճարին մէջ հարկ է որ կատարեն զայն «ի սիրոս իւրեանց» (Եփիս. Ե. 19)։ Այս ամէնը «վասն շինուածոյ եկեղեցւոյն» է, զոր ոչ փայտակերտ աղօթարանի և ոչ քարաշէն տաճարի նիւթական նշանակութեամբը կ'իմանսնը, այլ կ'ըմբռնենք մանաւանդ այն եկեղեցին՝ որ «սեպհական ժողովուրդ» կ'թարդմանուի, և որուն շինուութիւնն ու սրբութիւնը կ'ապահովուի բարոյական բարձրութեամբ և քրիստոնէական ողջախոհութեամբ հիմնարկուած ընտանեկան յարկերով։ Ընտանիքներն են որ կ'կազմին մեր «սեպհական ժողովուրդ»ը, անոնցմով կ'ձևանայ ու կ'պահապանուի աղջայնութեան սպին, անոնց մէջ կ'մարմնաւորուի նոր սերունդին հօրամոյն նկարագիրը։ Անոնցմով ձագախառն կ'երամանայ եկեղեցւոյն՝ զոր Քրիստոս սիրեց և որուն զոնեց իր անձը, փրկագուծելու համար զայն, սուրբ և անարատ վերածնունդով մը։ Հստ այսմ և ընտանեկան ամոլին փոխադարձ սէրն ու հաւատարմութիւնը առաքելական վարդապետութեան համաձայն Քրիստոսի և Եկեղեցւոյն հոգեսոր միութեան միծ խորհուրդին շօշափելի օրինակը համարուեցաւ, և իրեւ այն՝ ստացաւ իր մէջ իր իրական արժէքը։ Եւ արդարե, թնչ կրնայ արժել ընտանիք մը ուր «այրը իր կնոջ գլուխը» (Եփիս. Ե. 23) չէ, կամ որպինետև ներացած է անկի ու լքած և զանի, կամ օրովհետև զլուխ ըլլալու իմաստութիւնը կ'պակսի իրեն։ Այսպիսի անկարգ լծակցութենէ և անառակ յօժարութիւններէ ծնունդ տանող աններդաշնակութիւններ վերջապէս կ'վտանգին այն կապը, որ երջանիկ միութեան մը կնիքը պիտի պահէր անաղարտ։ Միւս կողմէն նոյնն է աղէտքը ընտանիքին համար՝ երբ կինը հնապանգութեան հարկը չի հատուցանէր իր երկան, զրժելով այն հանդիսաւոր խոստումին՝ զոր ըրած է Աստուծոյ և մարդոց առջև։ չիմանար թէ հեղ ու հանդարտ հոգիի անեղծ զարդերովը միայն կրնայ զեղեցկացնել իր ներքին մարդը (Ա. Պետր. Գ. 4), և իր տանը մէջ ոչ աստուածապաշտութեան անուշահուառութիւնը կ'զգացուի, և ոչ ալ բարի օծութիւնը բարի գործի մը կամ բարի խորհուրդներու։ Երբ իր ճակատագրին անարժան ընտանիք մը չարաչար խզումներով կամ պաշտօնական

ամուսնալուծումներով կ'քայքայուի՝ եկեղեցւոյ անդամակցութեան շնորհն ու առաւելութիւններն ալ կ'անհետին անկէ ու մանկութեան հասակի բողբոջները չեն ծաղկիր իր բարոյական հիւթը կորուսած ոստի մը վրայ: Եկեղեցին և ազգը պէտք ունին մաքուր, միաշունչ և համամիտ ընտանիկան կազմութիւններու, ուր Աստուծոյ օրհնութեամբ «կեանքի շնորհներուն ժառանգակից» զոյզերը սրբագործուին, ուր այսը տիրապէս հայրն ըլլայ կիրթ ու շնորհալի զաւակներու, ուր մինչև ցմահ Ա. Պատկի վայելչութիւնն յաւերժանայ սիրահարուստ ոգիստառումով, ուր ծնողական հոգն ու խնամքը անուցանէ փոքրիկները մանաւանդ «ուսմամբ և խրատու Տեան» (Եփես. Զ. 4): Քրիստոնէական սիրով ուռնացած հայ ընտանիքն է որ ազգին գոյութեանը սատարող ոյժ մը կընձեռէ իրմավ, և իր ծոցէն բզիսող անխարդախ կաթին հետ կ'ջամբէ նաև նոր սերունդին հոգեկան զարգացումը:

Այդ նոր սերունդին համար՝ հարկ չկայ ըսելու թէ՝ նոյնքան անհրաժեշտ է նաև միտքի զարգացումը տոհմային կրթութեամբ նպաստաւրուած, և մեր դպրոցներն ալ՝ որոնք մեր ընտանիկան յարկերուն շարունակութիւնը պէտք է ըլլան իրենց ամէն մէկ աստիճանաւորումներով, իբրև Հայերի հաստատութիւններ՝ հարկ է որ իսկապէս գոհացում տան մեր կրթական պէտքերուն: Հայ համայնքի պատկանող մանուկը մանկապարտէլին սկսկով պէտք ունի իրեւ հայ դաստիարակուելու, իր գիտակցութեան առաջին վայրկեանէն հպարտ զգալով ինքզինքը, ըստ որում զաւակն է այն ժողովուրդին՝ որ դարաւոր մաքառումներէ և նահատակութիւններէ զուրա կուզայ: «չարչարուած՝ բայց ոչ մեռած, օրհասական՝ և ահա կենդանի»: Մեզի յատուկ կրթութեան գործը կարօտ է մեծ զոհողութիւններու: Կ. Պոլսի կամ քանի մը դաւառական կեղրոններու մէջ ազգային և մասնաւոր դպրոցներու շնորհիւ ձեռք գերուած զնահատելի արդիւնքներն անբաւական են ըստ ինքեան, քանի որ ներքին գաւառներու մէջ՝ ուր կ'պակսին կենսական այնքան պէտքեր՝ կ'պակսի նաև ամենատարրական դաստիարակութեան մը բարիքը, ծանօթ վայրերու և անծանօթ անկիւններու ընդարձակ տարածութեան վրայ: Կրթական մեծ ու փոքր ընկերութիւններու հոգածութիւններն այդ մասին՝ առարկայ ըլլալով ընդհանուր համակրանքի՝ արժանի են նաև զործնական քաջալերութեան և մեր իւրաքանչիւրին պարտքն օժանդակել այդ վաեմ ձեռնարկներուն, ընդհանրացնելու համար միաքերու մակարդակին բարձրացումը՝ առանց որոյ փափաքուած յառաջդիմութեան անընդունակ կ'թեայ ու է ժողովուրդ: Առանց ուրանալու եւրոպական հաստատութեանց յանուն կրթութեան մատուցած ծառայութիւնը մեր մէջ՝ հարկ է չմոռանալ որ՝ տոհմասիրական և

մանկավարժական սկզբունքներու համաձայն՝ մայրենի լեզուն պէտք է խարիսխն ըլլայ մեր նախակըթութիան, և այդ ուղղութենէն որ և է շեղում օգտակար չէ ազգին: Լեզուներու կարգին մէջ՝ որոնց ուսուցումը ազգակն է մեր զարգացումին՝ իրեն անկեղծ օսմանցիներ կ'պարտինք կարեռազոյն տեղը տալ Օսմանեանի, և այնպէս պատրաստել Հայ ուսանողները, որ եթէ յարմարութիւն և բախտ ունենան՝ բաց գտնեն իրենց առջև պետական դպրոցներն ու համալսարանները, և լաւագոյն մշակութեան մը տիրանալով կարենան ծառայել ազգին՝ որուն կ'վերաբերին, և Սահմանադրական պետութեան՝ որուն կ'հպատակին:

Դպրոցներն ուրեմն՝ իրենց կանոնաւոր կարգապահութեամբը կրթական գործն արդիւնաւորելով՝ պաշտօն ունին նաև պատրաստելու բան քաղաքացին, իւրաքանչիւր ուսանողի մէջ արթընցնելով լուրջ ու գիտակից կոչումը քաղաքացիութեան, որ կ'կայանայ ազգային ու պետական օրէնքներուն պատկառ կինալու և հրամայուած պարտականութիւնները կատարելու առաջինութեան մէջ: Հարկ կայ արդեօք յիշեցնելու թէ որչափ պէտք ունինք աշխարհիկ կրթութեան ընդհանրապէս, նայնչափ և պէտք ունինք ի մասնաւորի կրօնական կրթութեան նախանձաւոր ըլլալու եկեղեցական ուաշտօնեաներու նկատմամբ, որոնց յանձնուած պաշտօնը նուիրական է արդարեւ, ուստի և անհրաժեշտ է ժառանգաւորաց Վարժարաններու կամ Ընծայարաններու հաստատմանն ու զարգացմանը հետամուտ ըլլալ յարմարաւոր կեդրոններու մէջ, պատրաստելու համար ժողովրդասէր, \* լուսամիտ, պարտաճանաչ և անձնուէր հովիւներ, որոնց թիւը շատ ցանցառ է դժբախտաբար: Ազգային մանկակույն դաստիարակութեան հոգն ստանձնող մեր հոգեոր եղբայրներէն, ուսուցչական և կրթական մարմիններէն մեծ վատահութեամբ կ'սպասենք թէ Հայ Եկեղեցին և թէ Օսմ. Հայրենիքին մատուցուելիք այս գնահատելի ծառայութիւնը:

Նարունակելի

«Երբազան Պատրիարքը ներկայ գտնուելով Տնտեսաբորհրդոյ վերջին նիստին, գոհունակութիւն յայտնեց Պատրիարքարանի մատակարարական վիճակին համար, որ կանոնաւոր ընթացք մը առած է և առօրեայ ելք մտական կանոնաւորութենէն զատ այլ և այլ ձևերով գոյացած է 6000 ոսկիի մոտ, պարտքն 2000 ոսկիի իջած է:

Այս մասին պէտք եղած բացատրութիւնները պիտի տրուին, երբ պիւտժէն բերուի Ազգային «Ժողովին»:

Մայիսի 28-ին աղքային երեսփոխանական ժողովը դարձեալ չէ կարողացել օրակարգի խնդիրներին լուծումն տալ, որովհետեւ 61 է եղել ներկայ երեսփոխանականների թիւը, մինչդեռ օրինական թիւը 71 պէտք է լինի։ Խորհրդակցութեան նիւթերը եղել են Կիլիկիոյ սրբազան Կաթուղիկոսի հրաժարականը, եկեղեցիներում միտինգ գումարելու խընդիրը, որ Զմիւռնիայի մէջ ծանր կերպարանք է ստացել և Եօանէսքուի կտակի գումարից 2500 ոսկի յատկացուիլը պ. Պասմաճանեանին բառարան կազմելու համար։

Լրագրերը հաղորդում են, որ յունիսի 20-ին խուռն բազմութեան ներկայութեամբ կատարուել է Վարագայ վարժարանի յորելեանը, կարգացոյցի համեմատ, եկեղեցու աւարտումից յետոյ կատարուել է վարժարանի հիմնադիր հանգուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի և նրա արժանաւոր աշակերտների հոգեհանգիստը։

Յորելենական հանգիսին ներկայ են եղել Վանայ կուսակալը, զօրքերի հրամանատարը, փոխ հիւպատոսներ, և հիւպատոսարանների թարգմաններ, հոյ և օտարազգի պաշտօնական անձինք և վեհ։ Հայրապետի կողմից՝ պ. Եր. Լալայեան։ Հանգէսը բացուել է առաջնորդական փախանորդի համառօտ ճառով և Վեհափառ Հայրապետի կոնդակի ընթերցմամբ, արտասանուել են բազմաթիւ ճառեր։ Հանգիսի ժամանակ ոչ մի անկարգութիւն չէ պատահել և հանգէսից յետոյ բոլոր ներկայ եղողները ուրախ և գոհ տրամադրութեամբ ցրուել են։

Վերջին ժամանակներս առհասարակ երեսփոխանական ժողովը օրինական մեծամասնութիւնը չի կարողանում դոյցնել օրակարգի խնդիրները չըլուծելով նորերն էլ աւելանում են։

Յունիսի 11-ին երեսփոխանական ժողովն այդպիսին ներից մէկն էր։ Ներկայ էին միայն 61 երեսփոխան։ Օրակարգի խնդիրները չեն լուծուել, աւելացել են եկեղեցի-

ներում միտինդ գումարելու և Սսի կաթուղիկոսի հրաժարականի խնդիրները:

Խորհրդակցութեան առարկաները եղել են.

ա. Կրօնական ժողովի 1906—1908 թուերի համար ներկայացուած համարատութիւնը տպագրելով բաժանել երեսփոխաններին:

բ. Առաջարկել, որ նախկին քաղաքական ժողովն էլ պատրաստի և ներկայացնի իւր համարատութիւնը:

Առենապետը առաջարկել է, որ վարչութիւնը ինքն յանձն առնի այդ համարատութեան պատրաստութիւնը, և վարձուի մի քարտուզար պատրիարքարանում գործը գլուխ հանելու համար:

Այս առաջարկը ընդունուել է 36 ձայնով:

գ. Աղթամարայ խնդրի քննութեան համար ատենապետի առաջարկութեամբ ժողովը բաւարար գտաւ վարչութեան պատասխանը, որ է.

Վարչութիւնը Տ. Ներսէս եպիսկոպոսը քննիչ նշանակած էր, որ չընդունեց այս պաշտօնը, յետու վարչութիւնը զգաց թէ՝ մինչև որ Վանայ մէջ ազգային օրինաւոր իշխանութիւնը չհաստատուի, այս քննութիւնը օրինաւոր արդիւնք չի կրնար տալ: Գաւառական ժողովին մէջ, որ 30 անդամէ կրազկանայ 15—16 գոյութիւն չունի, հետեւաբար վիճակին կազմակերպութեան համար Զիվինիիրեան եպիսկոպոսը Վանայ տեղապահ որոշուեցաւ, բայց չընդունեց, Տ. Վահան ծ. գ. Յակովը եան ալ վանեցիք չընդունեցին ու ընտրելի ներկայացուցին Տ. Յովոէփ արքեպիսկոպոսը, որ Ամերիկա կդժնուի և որուն համար դիմում եղաւ Ս. Հայրապետին. մինչև որ Վան չունենայ օրինական կազմակերպութիւն, այս քննութենէն ելք մը յառաջ չի գար:

դ. Սսոյ կաթուղիկոսի հրաժարականի վերաբերութեամբ վարչութեան առաջարկն էր չընդունել Սսոյ Սրբազն կաթուղիկոսի հրաժարականը և հրաւիրել իւր պաշտօնի գլուխը, կալուածական գործերը հետապնդելու համար խոստանալով ամեն աջակցութիւն:

Առենապետի առաջարկութեամբ որոշուել է այդ խընդիրը օրակարգ անցնել, որ մեծամասնութեան ներկայ միժողովի մէջ՝ նկատողութեան առնելի:

Ե. Եկեղեցիներում միտինգներ գումարելու խնդրի  
և այդ առիթով Ա.ԵՀ. Կաթոլիկիստի կոնդակի համար  
Սպիլեան էֆէնդին առում է. «Ճեզմէ աւելի զարգացած և  
յառաջադէմ ազգերի մէջ, որոնց քով աննշան կմնայ մեր  
գժբաղդ տղիքը, յարդանք կայ դէպի իրենց մեծերը մինչ-  
դեռ մենք կարհամարհենք զանոնք, և ընդհակառակն ի պա-  
տուի են անոնք, որ չարիք հասուցեր են ազգին»: Պէտք  
չէ, որ մենք լինաբանութեան նիւթ ընենք ամենայն Հա-  
յոց Հայրապետին կոնդակը, անիկա մեր Փէր Ճանն է:  
Քոեր է, որ Եկեղեցիներու մէջ միտինգ չըլլայ, չենք ըներ-  
ես կառաջարկեմ, որ Ն. Վեհափառութեան կոնդակն այդ-  
պէս ըմբռնուի: Միթինգ ընելու կամ չընելու խնդիրը  
միակ թուրքիոյ չի վերաբերեր, այլ ընդհանուր Հայոց,  
հետեաբար Ա. Հայրապետը միակ, իրեւ հայ Եկեղեցու  
պետ՝ ձեռնհաս է մօթիւ տալու»:

Որոշուեց՝ հետեւալ նիստին առաջին խնդիրն անել  
Սահ Ա. Կաթուղիկոսի հրաժարականը, Բ-ը միտինգների  
խնդիրը և Գ. Եօանիսքուի կտակի խնդիրը։ Ատենական  
գործողութիւնները սպառած լինելով, հերթը հասել էր  
օրակարգի խնդիրներին, բայց որովհետեւ ներկաների թիւը  
61-ից աւելի չէր, ուստի և առենապետը նիստը փակել է.  
Փափագ յայտնելով որ հետեւալ նիստին ոչ միայն մեծա-  
մասնութիւն ներկայ լինի, այլ երեսփոխանները խնդիրները  
ուսումնասիրած գան ժօղովի և ի զոր ժամավաճառու-  
թիւն չըլինի։

Համագումար ծողով.

Կըօնական ժողովոյ Երէկուան նիստին օրակարգի վերաբերեալ խնդիրներու խորհրդակցութեան պահուն Տ. Գնէլ Ժ. Վ. զետել տուաւ, թէ Ամենայն Հայոց Վեհ. Հայրապեալ մտադրութիւն յայտնած է յառաջնկայ տարի համագումար Եկե-

դեցական ժողով դումարել, պարագայ մը, որ և վեր կհանէ  
Ն. Ս. Օժութեան լայն ոտին, հետեւաբար այսպիսի ժողովի մը  
Ենթարկուելիք անհրաժեշտ խնդիրներու համար խորհրդակցու-  
թիւն մը կատարելու և յիշատակագիր մը պատրաստելու հա-  
մար, համագումար ժողով մը հրաւիրուի Պօլսոյ մէջ, եպիսկո-  
պոսներէ, քարոզիչ վարդապետներէ, աւագերէցներէ և աթո-  
ւականերէ բազկացած: Ազդային ժողովն ալ իր բաղձանքներն  
յայտնող գիր մը պատրաստելով պիտի ներկայացնէ, բայց կը-  
նականներուն ներկայացնելիք գիրը պիտի վերաբերի զուտ  
եկեղեց, կանոնական և ծխուական խնդիրներու, առանց ինդիք  
յուղելու դաւանութեան վրայ, որ անվիճելի է, ինչպէս Ս.  
Հայրապետն ալ կըու:

Կրօնական ժողովը մասնաւորապէս պէտք կդգայ ամուս-  
նական ճիւղահամարի և պատրագութեան ժամանակի ու ծի-  
սական ուրիշ խնդիրներու մասին ուշագրութիւնն հրաւիրեց  
վէհ. Հայրապետին Հարկաւ օրացոյցին մէջ սպազած աւելորդ  
յիշատակութիւններն յստակելու խնդիրն ալ խորհրդակցու-  
թեան առարկայ պիտի ըլլայ և եկեղեցւոյ մէջ օտարամուտ  
խորթութիւններ միանգամ ընդ միշտ մէկ կողմ պիտի գրուին:  
Կրօնական ժողովն ընդունեց Գնէլ Ճ. վարդապէտ այս առաջարկն  
և որոշեց համագումար ժողովն հրաւիրելով այսպիսի խնդիք-  
ներու համար խորհրդակցիւ, վիճաբանիւ, և արդիւնքն հաղոր-  
դել վէհ. Հայրապետին:

### ՀԱՅ ԿՈԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Մշակը (№ 150) հազորդում է, որ կ. Պօլսոյ Հայոց  
պատրիարք Տ. Եղիշէ Արքեքեպիսկոպոսը հետն ունենալով  
կրօնական և քաղաքական ժողովների անդամներից ոմանց  
յունիսի 29-ին շնորհաւորութեան այցելութիւն է տուել  
Հայ կաթողիկների պատրիարք Թերզեանին:

Սիրալիիր ընդունելութեան ժամանակ խօսակցութեան  
նիւթն եղել է կրօնապէս վտարանջած ազգի մէջ միասիրտ  
գործակցութիւն թէ հոգեորականների և թէ աշխարհա-  
կանների կողմից ազգի ընդհանրութեան օդտին:

Թերզեան Արքազանը ասել է.

«Զենք կրնար ըսել, թէ մեր գործը աւարտած է. մեր  
միջի սէրը և միութիւնը աւելի պիտի գիւրացնեն մեր